

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱ
ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼ

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ-2018

Տևողությունը **150** րոպե

9-րդ դասարան

Ա. Աշխատանք բնագրով:

Կարծես երեները ևս հասկանում էին, որ Սամվելը այսօր իրենց հետ գործ չպիտի ունենա, և համարձակ անցնում էին նրա աչքերի առջևից: Ահա խորամանկ վիթր դուրս պրծավ թփերի միջից, կտրեց ճանապարհը, մտնելով ժայռերի մեջ՝ ցատկեց մամռապատ ապառաժի գլխին և սկսեց ակնդետ նայել իշխանին: Բարակները նկատեցին նրա հանդրգնությունը և հարցական դեմքով ընդոստ դարձան դեպի իրենց տերը: Երբ հրահանգ չստացան, վշտացած շարունակեցին իրենց թեթև գնացքը: Ապա կաքավների աղմկալի երամը սրաթռիչ թևքերով խռովեց տիրող լռությունը: Բազեները, որ մինչև այդ րոպեն թառած էին զինակիցների ձեռքերի վրա, տեսնելով այն կարմրակտուց թռչունների համարձակությունը, սրածայր թևքերը թափահարեցին և կամենում էին իսկույն հետամուտ լինել: Բայց նրանց ոտքերի մետաքսյա նարոտը թույլ չտվեց հարձակում գործել:

1. Տեքստից դ՛րս գրեք տրված բառակազմական կաղապարներով մեկական բաղադրյալ բառ՝ արմատ+հոդակապ+արմատ, ածանց+արմատ+ածանց, ածանց+արմատ, արմատ+հոդակապ+արմատ+ածանց: (2 միավոր)
2. **Երե, նարոտ, բարակ, ընդոստ** բառերի իմաստները բացատրե՛ք կամ գրե՛ք մեկական հոմանիշ: (2 միավոր)
3. Տեքստում որո՞նք են **պախրա, անքթիթ, ցուցում, վեմ** բառերի հոմանիշները: (2 միավոր)
4. Գրե՛ք այն բառերը, որոնցում գրաբարյան հոգնակերտ մասնիկը վերածվել է ածանցի: (1 միավոր)
5. Նշե՛ք՝ տրված բառերը ինչ խոսքի մասի արժեքով են հանդես եկել տեքստում՝ **հետ, դուրս, մինչև, ապա**: (2 միավոր)
6. Ընտրե՛ք վերաբերական պարունակող նախադասությունները և նշե՛ք վերաբերականների տեսակները: (2 միավոր)
7. Դու՛րս գրեք դերբայով, հարաբերական ածականով, դերանունով արտահայտված մեկական որոշիչ: (2 միավոր)
8. Դու՛րս գրեք ժամանակի պարագա դերբայական դարձված պարունակող նախադասությունը՝ նշելով դերբայի տեսակը: (2 միավոր)

Բ. Շարադրություն՝ «Ընկերությունը սրբություն է» վերնագրով
(երկու էջի սահմաններում): (5 միավոր)